ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"19" 03 2021թ. N ԿԱ/1/6539-2021

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ ք. Երևան, Փավստոս Բուզանդի փող, 1/3, 4-րդ հարկ
Շուշան Դոյդոյանին

Ի պատասխան 26.02.2021թ
թիվ 110964 գրության

Հարգելի տիկին Դոյդոյան

Տեղեկացնում ենք, որ <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> օրենքի 6.1. հոդվածի համաձայն.

<<1. Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական վերահսկողությունն իրականացնում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին):

2. Տեսչական մարմինը՝

1) իր իրավասության սահմաններում վերահսկողություն է իրականացնում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի իրավական ակտերի, լիցենզիաների և միջազգային թույլտվությունների պահանջների կատարման նկատմամբ.

2) կիրառում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ սույն օրենքի պահանջների խախտման համար>>:

Տրանսպորտի բնագավառում վերահսկողությունը իրականացվում է Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից՝ <<Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> օրենքի պահանջներին համապատասխան:

<<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի <<ա>> ենթակետի համաձայն մրցույթին մասնակցության համար սահմանված պայմանների խախտումը կամ դրանց գնահատված ցուցանիշների նվազումը երթուղու սպասարկման իրավունքից զրկման հիմք է: Սույն, ինչպես նաև օրենքով սահմանված զրկման այլ հիմքերի պարագայում ավտոբուսային կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունները կարող են զրկվել երթուղու սպասարկման իրավունքից նույն օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասում նշված համապատասխան մարմնի որոշմամբ՝ տեսչական մարմնի ներկայացմամբ և մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ:

Քաղաքացիների կողմից ներկայացված բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունները

կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության, եթե թույլ տված խախտումը կրում է վարչաիրավական բնույթ կամ զրկվել սպասարկման իրավունքից վերոհիշյալ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարգանքով՝ Ա. Սիմոնյան

3/18/2021

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Подписано: SIMONYAN ARMEN 4003890647

Կատարող՝ Ավտոմոբիլային տրանսպորտի
քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների
վարչություն Ա. Կարապետյան 010511348